ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին՝ ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

17/08/2020 - 02/09/2020

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 3 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 3 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

3 կողմ

4 դեմ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 284-Ն և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 287-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Նելլի Մնոյան 18.08.2020 17:55:12	2) Առաջարկում եմ թոշակառուին ընձեռել հնարավորություն, այցելելու արտերկրում ՀՀ դեսպանատուն և այնտեղ ստորագրել կենսաթոշակի վերաբերյալ անհրաժեշտ թղթերը (ինչպես արվում է ընտրություններին ՀՀ քաղաքացու մասնակցության դեպքում):	Առաջարկությունը հստակ չէ, քանի որ պարզ չէ, թե կենսաթոշակի վերաբերյալ անհրաժեշտ ինչ թղթերի մասին է խոսքը: Տեղեկացնում եմ, որ կենսաթոշակի վճարումը շարունակելու համար օտարերկրյա պետությունում գտնվող կենսաթոշակառուն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կարող է	

			ներկայացնել ՀՀ դեսպանատան կողմից վավերացված լիազորագիր:	
2	Նելլի Մնոյան 18.08.2020 17:55:12	Բարև ձեզ Ունեմ 2 առաջարկ անձնական փաստից ելնելով: 1) Առաջարկում եմ երկրից դուրս գտնվող թոշակառուի բանկ այցելելու և տարին մեկ անգամ ողջությունը փաստելու պարագան դյուրացնել և ընձեռել հնարավորություն այժմյան տեսակապի հնարավորության միջոցներով (Viber, WhatsApp և այլն) էլեկտրոնային ստորագրել անհրաժեշտ փաստաթղթերը՝ անձամբ թոշակառուի և անձնագրի առկայությամբ գտնվելով էկրանի առջև:	Առաջարկվող կարգավորումը Նախագծի կարգավորման առարկան չէ: Կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուի՝ կենսաթոշակի վճարումը շարունակելու համար տարեկան մեկ անգամ բանկ ներկայանալու պահանջը սահմանված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով: Ընդ որում, բանկ ներկայանալու վերաբերյալ օրենքի պահանջը նպատակ ունի ստանալ բանկի հավաստումը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու և որ թե ողջ լինելու վերաբերյալ: Ըստ այդմ, նախագծում առաջարկությունից բխող փոփոխություններ կատարվել չեն կարող:	
3	Karen Abrahamyan 18.08.2020 10:57:19	Բարև Ձեզ: Նախագծով առաջարկվում է հետաձգել ընտանեկան ու սոցիալական նպաստի, նաև հրատապ օգնության վճարումներն անկանխիկի անցնելու	Նախագծով նախատեսվում է «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընտանեկան	

		ժամկետները, իսկ երբվանի՞ց պետք է անցում կատարվեր դրան՝ ըստ նախագծի:	նպաստները և սոցիալական նպաստները սահմանված կարգով վճարումն իրականացնել 2021 թվականի մարտի 1-ից:	